

Դասընթացի անվանումը՝	«Ապացուցելու և ապացույցներ ներկայացնելու պարտականությունը քաղաքացիական դատավարությունում» 8 ակադեմիական ժամ
Տևողությունը՝	2012 թ.
Ժամանակահատվածը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Անցկացման վայրը՝	
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Դասընթացը նախատեսված է ընդհանուր իրավասության դատարանների դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:

Դասընթացը նվիրված է քաղաքացիական դատավարությունում ապացուցման բեռը կողմերի միջև բաշխելու, ապացուցելու և ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կատարելու հետ կապված հիմնախնդիրներին: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Ապացուցման առարկան որոշելը և ապացուցման պարտականությունը բաշխելը որպես գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրներ:
- Ապացուցման առարկան որոշելու դատարանի իրավասությունը, դրա իրականացման կարգն ու սահմանները: Քաղաքացիական գործով ապացուցման առարկայի կազմը:
- Ապացուցման ոչ ենթակա փաստեր: Դատարանի կողմից հանրահայտ ճանաչված փաստեր: Նախադատելի փաստեր. հասկացությունը, նախադատելիության սուբյեկտիվ և օբյեկտիվ սահմանները, նախադատելիությունը բացառող հանգամանքները: Անվիճելի փաստերի հասկացությունը, տեսակները, դրանք ապացուցման առարկայից հանելը:

- Ապացուցման պարտականության հասկացությունը, չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքները: Ապացույցների բացահայտման հիմնախնդիրը:
- Ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելու ընդհանուր կանոնը:
- Ապացուցողական կանխավարկածներ, հասկացությունը և ազդեցությունն ապացուցման պարտականությունը բաշխելու վրա:

Դասընթացը վարում է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սերգեյ Մեղրյանը: